Վահրավար

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 78 կմ,
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 11.5 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1380 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,
Վահրավարը Հայաստանի հին բնակավայրերից է: Այդ են վկայում գյուղում և շրջակայքում գտնվող միջնադարյան գյուղատեղիները (Կարմիր վանք, Ծավի դիք), եկեղեցիները, խաչքարերով գերեզմանոցները: Հատկապես նշանավոր է Կարմրավանքի եկեղեցին (17-րդ դար), որը թաղածածկ ուղղանկյան դահլիճ է՝ թեք ծածկով: Բեմի հատակի տակ թաքստոց է, որի օդափոխության անցքը դուրս է գալիս խորանի պատին կից և աննկատ է:
Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3249 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 626 հա, որից՝
- վարելահող՝ 26 հա, բազմամյա տնկարկ՝ 13 հա, արոտ՝ 169 հա, այլ հողատեսք՝418 հա
- բնակավայրերի հողեր՝ 16 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝16 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2590 հա,
- ջրային հողեր՝ 1 հա